ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

12.03.2012թ.
162-ի 6

“Հայաստանի հանրային
հեռուստաընկերություն” ՓԲԸ-ի
գործադիր տնօրեն
պարոն Գագիկ Բունիաթյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Բունիաթյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Հայաստանի հանրային հեռուստաընկերությունը մանկական (մինչեւ 10 տարեկան երեխաների համար) ի՞նչ հաղորդումներ, մուլտֆիլմեր է հեռարձակել 2011թ.-ի ընթացքում՝ յուրաքանչյուրի հեռարձակման ժամանակաշրջանը (ամիսները), շաբաթվա օրերը եւ տեւողությունն (հեռարձակման ժամերը) ըստ օրերի:
2. Հայաստանի հարնային հեռուստաընկերությունը մանկական (մինչեւ 10 տարեկան երեխաների համար) ի՞նչ հաղորդումներ, մուլտֆիլմեր է հեռարձակել 2012թ.-ի հունվար-փետրվար ամիսներին եւ նախատեսում հեռարձակել 2012թ.-ի ընթացքում՝ յուրաքանչյուրի հեռարձակման ժամանակաշրջանը (ամիսները), շաբաթվա օրերը եւ տեւողությունն (հեռարձակման ժամերը) ըստ օրերի:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան